№ 204 ԿԻՐԱԿԻ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 204

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ից ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.

Սեպտ. 1-ից մինչեւ հոկտ. 1-ը—85 կ.:
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿՐ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՇԵՏԵՒԱԲՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Ռիգայում՝ Площадь Биржи 8

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիարար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այսօր, կիրակի, սեպտեմբերի 15-ին նշանակված է ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՍԱՐԳԻՍ աւ.-քահ. ԻԳԻԹԵԱՆՑԻ

համար, որի մասին նրա ամուսինը՝ ԵՂԻՍԱԲԷԹ ԱՆԱՆԵԱՆ, որդին՝ բժշկապետ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԳՍԵԱՆ և հարսները՝ ՄԱՐԻԱՄ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ և ՎԱՐՍԵՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ յայտնում են ազգականներին, ծանօթներին և ծերակատներին: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 10-ին, իսկ հոգեհանգստեանը՝ ժամը 12-ին, ս. Մինասի եկեղեցում, Հալաբար, Իօրսկի փողոցում:

783. 1—1

Այսօր, կիրակի, սեպտեմբերի 15-ին

Սօֆիա Գրիգորեան ՅՈՎԱՆԷՍԵԱՆՑԻ

մանվան տարեդարձին Խօջէվանքի գերեզմանատան եկեղեցում տեղի կունենան պատարագ և հոգեհանգիստ, որի մասին յայտնում են մայրը՝ ԹԱԳՈՒՀԻ ԲԱԲԱՑԵԱՆ, եղբայրը՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑԸ իր զաւակներով, և զուտրը՝ ՍԱԹԵՆԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱԴԱՄԵԱՆՑԸ: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 11-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին:

778. 1—1

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ
Վ ԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրեան ներքին այգում Մուտքը վճարով—մեծերից՝ 30 կ., երեխաներից՝ 20 կ.:

Հրապարակը կը փակվի սեպտեմբերի 22-ին

(Կ. հ.) առ. 781. 3—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(ՀՈՒՐԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Երեքշաբթի, սեպտ. 17-ին

Հայկ. Դրամ խմբագրութիւնը Մասնակցութեամբ դերասան. Կը ներկայացնէ ՇԻՎԼԷՐԻ

ԱՒԱԶԱԿՆԵՐ

Ողբերգութիւն 5 գործ. և 7 պատկ. թարգմ. Վ. Վարդանեանի

Մասնակցում են.—Տ. տ. Լիւսի-Սեւումեան, Յասմիկ, պ. պ. Ալլահվերդեան, Գալատեան, Երամեան, Ձօնեան, Մանուէլեան, Յարութիւնեան, Յարութիւնեան II, Սատիրոյլեան, Տէր-Գրիգորեան, Օհանեան, Սեւումեան և ուրիշները:

Սկիզբը 8½ ժամին երեկոյեան
Բեմադրեաց՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հեղինակ անդամներ
Կ. ՇԻՐԻՆԵԱՆ և Ն. ԽԱՐԱԶԵԱՆ

(առ.) 784. 1—1

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
(Կ. հ.) 357. 50—38

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԷՈՆՋԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը

Անկիւն Արաս-Արզակայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.

(Կ.հ.կ.) առ. 769. 74—3

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ տղամարդի, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (ստացիոնարն) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն կանացի, տղամարդի և մանկական հիւանդութիւն ունեցող երեկէ հիւանդների, ամեն օր՝ ցերեկ. ժամը 11-ից մինչև 12-ը:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Նեւսէսեան
Ն. Զ. Ռամիկեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(Հ.Կ.) առ. 779 100—87

ԲԺՇԿԱՊԵՏ

ՄԻՔԷ. ԱՂԱԶԱՆԵԱՆՑ

(Մանրէաբան մեզաբանական, սիֆիլիսի և կաթուղիութիւնների)

վերադառնալով արտասահմանից վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնը ցեր. ժամը 1—4-ը և երեկ. ժամը 7—9-ը, Միխայլովսկի պր., 38. տելէֆոն 6—63.

(Ե. հ. կ.) առ. 753. 10 4

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Օգնական Prof. Posner-ի

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բերլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պոզների կլինիկայի մէջ. Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ:

Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.

(Կ.) առ. 830. 0—40

ԲԺԻՇԿ

Ե. ԲԵՐԵՍՏԵՋԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋԱՂԱԾԻՆ հիւանդութիւններ:
(Առանձն. կրծքի, թոքախտի և արեան պակասութեան)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը

Դրաֆիկայա, 3 (Հօրթս-Մելիքօվսկայա փողոցի կողմից):

(Ե.հ.կ.) առ. 774. 100—2

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Վերադառնալով հանրային ջրերից՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը:

Սօրօլսկ, Բէրուսօվսկայա, № 33 (անկիւն Պոսկէվիչա փող.), տէլէֆօն 11—75.

առ. 785. 2—1

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Երէկ ռուսաց օրթոդոքս եկեղեցին տօնեց հանդիսաւորութեամբ 1600-ամեակը պատմական այն մեծ ակտի, որ կոչվում է Միլանեան էդիկտ: Այդ էդիկտով կամ հրամանագրով, որ տրվեց Միլան քաղաքում, 313 թ., հռոմէական կայսրեր Կոնստանդինը, կոչված Մեծն, և Լիկինիոս հռչակեցին համբերողաբար վերաբերմունք դէպի քրիստոնէական կրօնը՝ հեթանոսական կրօնի կողմից և դրանով հին դրին քրիստոնէութեան բարգաւաճման ամբողջ տիեզերքում: Մի քանի ժամանակ յետոյ արդէն Մեծն Կոնստանդինը քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակեց:

Այդ 1600-ամեայ յօբելեանի տօնախմբութիւնը միայն օրթոդոքս եկեղեցու տօնախմբութիւն չէ, այլ և համայն քրիստոնէական եկեղեցու տօնախմբութիւն, նրա հետ և հայոց եկեղեցու տօնախմբութիւնը:

Միլանեան էդիկտով վերջ տրվեց այն պատերազմին, որ ամբողջ երեք դար քրիստոնէական կրօնը, այն է Յիսուսի մարդասէր վարդապետութեան առաքեալները և հետեւողները մղում էին մաշված, հնացած հեթանոսութեան դէմ, որ սատիկ հալածանքներ էր յարուցել նոր վարդապետութեան հաւատացեալների դէմ: Եւ մինչ հեթանոսական աշխարհը զինված էր ամեն տեսակ—ունէր և զէնք, և իշխանութիւն, և նիւթական կարողութիւն, քրիստոնեաների միակ զէնքն էր՝ սէր, համբերութիւն, հաւատ և յոյս, անկուն, անընկճելի հաւատ դէպի գաղափարը, Յիսուսի խօսքը և Աստուծոյ Բանը: Եւ յաղթական հանդիսացաւ ոչ թէ իշխանաւորը, զինուորը, բռնակալը, հարուստը, այլ ողորմելի, տնանկ, մերկ, քաղցած քրիստոնեան: Ցանձին հեթանոսութեան խօսում էր նիւթը, մարմինը, իսկ յանձին քրիստոնէութեան՝ հոգին, միտքը, գաղափարը:

Եւ յաղթող հանդիսացաւ Գաղափարը, Բանը:

Ահա այդ մեծ յաղթանակի սկզբնաւորութեան, պատմական այդ մեծ ակտի 1600-ամեայ յօբելեանն էր, որ այս տարի տօնում է քրիստոնէութիւնը, և երէկ տօնեց օրթոդոքս եկեղեցին, որ մասն է կազմում ընդհանրական եկեղեցու:

Բայց 1600 տարիներ առաջ տեղի ունեցած դէպքը արդեօք չը պէտք է ստիպէ մեզ անդրադառնալ, պանալ մտքով և հոգով դէպի այդ ժամանակի քրիստոնեաները, որոնք կուռում էին ուիւծի պէս բռնակալութեան, իշխանութեան, հղօրութեան, նիւթի դէմ միայն երեք անսնիւթական զէնքով—հաւատով, յոյսով և սիրով: Մնացել են արդեօք անարատ և անաղարտ այսօր քրիստոնէութեան այդ երեք վեհ սկզբունքները, և այսօրվայ քրիստոնէական եկեղեցին մնացել է նոյնը, ինչ որ էր 1600 տարի առաջ, թէ յաղթելով հեթանոսութեան, նա ինքն բռնել է այսօր նրա տեղը՝ զարդարելով իրան այն պատմուճաններով, որոնցով զարդարված էր հեթանոսութիւնը:

Արդեօք մենք, զաւակներս այն նախնի քրիստոնեաների, որոնք 1600 տարի առաջ սկսեցին ազատ շունչ քաշել Միլանում հրատարակված էդիկտով, կարող ենք խղճով վկայել, թէ մենք իրապէս ըմբռնել ենք Աւետարանը այնպէս, ինչպէս այդ նախնիքն էին ըմբռնում, և չենք պաշտում այսօր միայն նրա կեղեւը, կազմը, առանց թափանցելու ներքին էութեան մէջ:

Որքան քիչ բան է կատարված 1600 տարիների ընթացքում Յիսուսի պատուէրներից և պատգամներից: Ոչ միայն տարբեր ցեղի և լեզուի ազգութիւնները այսօր իրար միս են ուտում, այլև միևնոյն ցեղի և լեզուի անհատները չեն կարողանում այսօր ապրել քրիստոնէաբար—լինել համբերող, կարեկից, տածել անկեղծ հաւատ, յոյս և սէր:

Եւ 1600-ամեայ յօբելեանը ամենից առաջ մեզ պէտք է յիշեցնէ թէ որպիսի թզուկ քրիստոնեաներ ենք մենք մեր հսկայ նախնի քրիստոնեաների առաջ, այն նախնիքների, որոնք իրանց գաղափարի, հաւատի և Բանի համար անվախ, անխռով և համարձակ ընկնում էին ամեհի գազանների երախը, այրվում էին իբրև ջահեր և սէր, յոյս, հաւատ մրմնջալով աւանդում էին իրանց հոգին:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 սեպտեմբերի

Լիսսաբոն.—Սինարի մօտերը կալանաւորվեցին հինգ հոգի, որոնք կասկածվում են մինիստր-նախագահ Կոստի կեանքի դէմ մահափորձ կատարելու դիտաւորութեան մէջ: Կալանաւորվածների մօտ գտնվեցին պայթուցիկ նիւթեր: Նրանք յայտնեցին, թէ իրանք սինդիկալիստներից են: Կալանաւորներից մինը խոստովանվեց, որ դաւադրութեան նպատակն էր սպանել մինիստր-նախագահին. նա հաղորդեց յարձակման պլանը, տուեց բոլոր գործակիցների անունները:

«Աուտո» լրագրի ասելով, Կոստի սպանութիւնը պէտք է ազդանշան ծառայէր ընդհանուր ապստամբութեան: Միւս կալանաւորվածները յայտնել են, թէ մտադրութիւն կար սպանել զինուորական մինիստրին:

Լուրերի համաձայն, դաւադրութեանը մասնակից են ինչպէս արմատական հանրապետականները, նոյնպէս և միապետականները:

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ սուլթանը թեթև տարութեան պատճառով այսօր ներկայ չի լինի սելամլըքին:

Բէյրութ.—Բարեսորոգչականների լիդէրները Ֆրանսիական հիւպատոսի միջոցով շնորհակալութիւն յայտնեցին Ֆրանսիային այն հիւրասիրութեան համար, որ ցոյց տրվեց Պարիզում տարաբնակիական կօնգրէսի անդամներին:

Կահիրէ.—Ֆրանսիական կառավարութիւնը առաջ, քան կը համաձայնէ Եգիպտոսի բէժիմի փոփոխութեան կամ վերացման, կը պահանջէ լուրջ երաշխիքներ Ֆրանսիական հպատակների շահերի պաշտպանութեան մասին:

Պէկին.—Չինական արտաքին գործերի նոր մինիստրը բանակցութիւններ սկսեց ռուսաց դեսպանի հետ մանդջուական հարցի առիթով մանդջուական, չինական և ռուսական կառավարութեան միջև եռակողմեան պայմանագիր կապելու խնդրով:

Տոկիո.—Ի պատիւ դեսպան Մատանոյի՝ սեղանաւորները խնճոյք կազմեցին, ուր Մատանոն ընդգծեց, որ թէև Եապոնիայի և Ռուսաստանի միջև տիրում են լաւագոյն բարեկամական յարաբերութիւններ, սակայն Եապոնիան պէտք է մտածէ իր զինուորական ոյժերը մեծացնելու մասին:

Հռոմ.—Մինիստրների խորհուրդը քննեց պալատը արձակելու և նոր ընտրութիւններ նշանակելու հարցը:

«Տրիբունան» հաղորդում է, որ պալատը կը գումարվի նոյեմբերի 13-ին:

«Բիւզանդիոն» թերթը հաղորդում է որ Օրմանեան սրբազան հիւանդացել է ծանր կերպով: Նրան բժշկում են եղբայրը՝ դօքտոր Օրմանեան և բժշկապետ Վ. Թորգոմեան: Վերջին օրերը նա սկսել է ապաքինել:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 սեպտեմբերի

Բէլգրադ.—Թագաւորական հրամանով զինուորական մինիստրը լիազօրված է անհրաժեշտութեան դէպքում զինուորական ծառայութեան կոչել բոլոր պահեստի օֆիցէրներին և երկրորդ զինուորակոչի անհրաժեշտ զօրամասերին:

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, ալբանները գրաւել են Մավրօվօն և Սկոպլէն: Սերբերը Մավրօվոյի մօտերը կարող եղան կանգնեցնել ալբանների արշաւանքը դէպի Գոստիվար: Այդ կռուում ալբանները կորցրին 50 մարդ: Արշաւողների թիւն է 6000 հոգի:

Լուրեր են պատվում, թէ իբր ալբանների մէջ կան օտարազգի օֆիցէրներ:

Դատելով ալբանների շարժումներից, նրանց մտադրութիւնն է ապստամբեցնել տեղական ալբան ազգաբնակութիւնը:

Պէշկոպէում տեղացիք ապստամբվել են, սպանել են մի քանի քրիստոնեայ վաճառականի և չարդ են տուել այնտեղ գտնվող սերբական զօրամասին:

Ալբանների ձեռքում գտնվող Դիբրի վիճակը յայտնի չէ:

Գօրնայա Բէկա շրջանի ազգաբնակութիւնը փախել է Գոստիվար:

Ալբանական սահմանակից շրջանում դրութիւնը չափազանց լուրջ է ալբանների մասսայական յարձակումների պատճառով:

Կիչէվոն տակաւին գրաւած չեն ալբանները:

Կասկած կայ, որ Գալիչնիկը նոյնպէս ալբանների ձեռքումն է:

[illegible] զովում լուծվեց Բոլգարիայի մուֆթիների հարցը:

Շաբաթ օրը քննվելու է վակուֆների խնդիրը:

Եկող շաբաթվայ սկզբին հաւանօրէն կը սարքագրվի հաշտութեան պայմանագիրը:

Սօֆիա.—Լրագրական թղթակիցների հետ խօսելիս՝ Գէնադիէվը կտրուկ կերպով հերքեց այն տեղեկութիւնը, թէ ալբան ապստամբների թեւում գտնվում են բոլգար օֆիցէրներ, կամ թէ առհասարակ Բոլգարիան մասնակից է ալբանական շարժմանը:

Ֆէրդինանդ թագաւորը մօտիկ ապագայում կը մեկնէ արտասահման կարճ ժամանակով առողջութիւնը վերականգնելու համար:

Բոլգարական երկաթուղիների ընկերութեան ներկայացուցիչը մեկնեց Մուստաֆա-փաշա արեւելեան երկաթուղիների ընկերութեան ներկայացուցչի հետ բանակցելու՝ Սօֆիայի և Կ. Պոլսի միջև հաղորդակցութիւնը վերսկսելու մասին:

Աթէնք.—Կառավարութիւնը դիմեց Բ. Դրան, խնդրելով հաղորդել յոյնթուրքական բանակցութիւնները վերսկսելու ճիշդ ժամանակը:

Աթէնքի գործակալութեանը տեղեկացնում են Կօրիցայից, որ սերբերը հեռացան Սատրօվօյից և դիմել են դէպի Օխրիդա:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս յայտնի է, ներկայումս բանակցութիւններ են վարվում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Թիւրքիայի միջև՝ Հայաստանում երկաթուղիների կօնցեսիաներ ձեռք բերելու մասին:

Այդ բանակցութիւնների մանրամասնութիւններից մի քանիսը սրանք են:

Ի նկատի ունենալով որ բոլոր մեծ պետութիւնները, բացի Ռուսաստանից, արդէն համաձայնութիւն են տուել, որպէսզի Թիւրքիան աւելացնէ ներմուծվող ապրանքների մաքսը 4%-ով և իրանց համաձայնութեան փոխարէն պայման են դրել ստանալու զանազան արտօնութիւններ ու կօնցեսսիաներ, ներկայումս Կ. Պոլսի և Պետերբուրգի միջև կատարվում է մաքսերի փոխանակութիւն այն պայմանների մասին, որոնցով Ռուսաստանը ևս կարող է նոյնպէս իր համաձայնութիւնը տալ մաքսերը աւելացնելուն:

Ինչպէս յայտնի է, Ռուսաստանը բանակցութիւններ է վարում Թիւրքիայի հետ Ֆրանսիայի մասին: Ռուսաստանը ուզում է, որ Ֆրանսիան ևս համաձայնի Ռուսաստանի հետ Սեւանի ծովի մասին: Ռուսաստանը ուզում է, որ Ֆրանսիան ևս համաձայնի Ռուսաստանի հետ Սեւանի ծովի մասին:

Ներկայումս Թիւրքիայի և Ռուսաստանի միջև վարվող բանակցութիւնները վերաբերում են, ի միջի այլոց, 1900 թուի թիւրք-ռուսական համաձայնութիւնը ձևափոխելուն, որպիսի համաձայնութեամբ Թիւրքիան պարտաւորութիւն յանձն առաւ չը տալու Հայաստանում՝ առանց Ռուսաստանի նախնական համաձայնութեան՝ ոչ մի երկաթուղային կօնցէսիա։

Ռուսաստանը ցանկանում է այդ համաձայնութիւնը փոփոխել այն ուղղութեամբ, որպէսզի նրանում Մեծ Բրիտանական ձայնի իրաւունք Հայաստանի բոլոր հնարաւոր երկաթուղային կօնցեսիաների քաղաքական ու ռազմական նշանակութիւնը քննելու ժամանակ, ինչպէս նաև Կովկասին մերձ գտնվող շրջաններում երկաթուղիներ կառուցանելու կօնցեսիաների նկատմամբ։

Հոգալով, որպէսզի նոր երկաթուղիները Հայաստանում չը հակասեն ռուսական շահերին ոչ քաղաքական, ոչ ռազմական տեսակէտից, Ռուսաստանը միևնոյն ժամանակ շահագրգռված է, որպէսզի 1900 թ. համաձայնութիւնը չը մնայ մեռած տառ։ Այդ պատճառով Ռուսաստանի, Ֆրանսիայի և Թիւրքիայի միջև տեղի ունեցող լրացուցիչ բանակցութիւնները նպատակ ունեն ստեղծել իրերի այնպիսի դրութիւն, որով Հայաստանի նոր երկաթուղիների տնտեսական նշանակութեան հարցի վճիռը պատկանէ Ֆրանսիային, իսկ ռազմական ու քաղաքական նշանակութիւնը՝ Ռուսաստանին։

ՎԼՈՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Պատրիարքական ընտրութիւն

Կ. Պոլիս, 1 սեպտեմբեր

Պատրիարքական ընտրութիւնը կատարուեցաւ երկու օր առաջ։

Ինչպէս արդէն կը գուշակուէր, Զաւէն եպ.՝ Դիարբէքիրի առաջնորդը ընտրուեցաւ պատրիարք։

Քուէարկութեան միջոցին Մայր եկեղեցւոյ մէջ ներկայ էին 84 երեսփոխան։

Արդիւնքը եղաւ՝

64 քուէ Զաւէն եպ. Տէր-Եղիշեան
11 » Եղիշէ արքեպ. Դուրեան
1 » Մատթէոս եպ. Յովակիմեան
6 » սպիտակ
2 անձ ձեռնպահ։

84 համագումար։

Ինչպէս ձեզի հեռագրած էի, Զաւէն եպ. իրականութեան մէջ պատրիարք կընտրուէր 12-ի դէմ 64 քուէով, քանի որ մնացեալ [illegible] կարելի չէ զանոնք ընդդիմադիր համարել։

Ձեռնպահ մնացողներն էին Շահրիկեան և Վարդգէս, իսկ սպիտակ քուէ տուողներն էին դաշնակցական երեսփոխանները, որոնք, հակառակ իրենց համաձայնութեան, վերջին պահուն կուսակցական որոշումով իբր թէ ձեռնպահ մնացին և չմասնակցեցան քուէարկութեան հակառակ անոր, որ իրենցմէ ոմանք կուսակից էին քուէարկելու և Զաւէն եպ.-ի ի նպաստ քուէարկելու։ Հետևաբար զիրենք իբր ընդդիմադիր նկատել կարելի չէ։

Իսկ Եղիշէ եպ. Դուրեանի 11 քուէներէն 7-ը կը պատկանի կղերականներու, որոնք անհաշտ ըլլալով երիտասարդ եպիսկոպոսի մը պատրիարքանալուն՝ քուէարկեցին ի նպաստ Դուրեան արքեպիսկոպոսի։ Իսկ աշխարհականներէն Դուրեանի քուէ տուած են իր երկու ազգականները... և ազգ. երեսփոխան՝ երկու համբաւորոր տիպեր... Մինրդատ Հայկազն և Սմբատ Բիւրատ։

Այսպէս ազգականներու... և ողորմելիներու միայն... մնաց խեղճ Դուրեան սրբազան, որ ես ապահով եմ թէ եթէ պատրիարքալ վերընտրուի, չպիտի ընդունի իրեն առաջարկուած այդ պաշտօնը... մանաւանդ երբ այն կը մատուցուի իրեն Հայկազուններու, Բիւրատներու և Մինասեաններու միջոցաւ։

* * *

Նոր պատրիարքը Դիարբէքիր գնալով, վարչութիւնը կուզէ այս պարագան օգտագործել, Հայաստանի ճամբով բերելով Կ. Պոլիս, և գաղթականութեան հոսանքի դէմ պատրիարքին բերնով յորդորներ տալու ծրագիր մը մշակելով։

1869-էն յետոյ առաջին անգամ է, որ պատրիարք մը, իր այդ հանգամանքովը, կը ճամբորդէ Հայաստանի հողին վրայ և հայրենի հողին վիշտերով և ցաւերով բեռնաւորուած՝ կուգայ Կ. Պոլիս, անկէ դարման մը ճարելու համար այդ ծով ցաւերուն։

Ասիկա տեղական հայոց համար մխիթարութեան առիթ մը կընայ ըլլալ և ոգևորիչ հանգամանք մը ունենալ։

Զաւէն եպ. կրնայ այս նպաստաւոր պարագան շահագործել տեղական պաշտօնեաներուն իր հեղինակաւոր ձայնը լսելի ընել տալով։

Քանի որ ինքը Կ. Պոլիս կերթայ կայսեր և մինիստրներուն ներկայանալու, տեղական պաշտօնեաները իրեն հաճոյ երևալու պիտի ջանան, կեդրոնին մէջ հայոց պատրիարքը իրենցմէ գանգատելու չհարկադրելու համար։

Զաւէն եպ. Տէր-Եղիշեան ընտրուած ըլլալով առանց կուսակցութեան խորութեան, դրեթէ ազգային ընդհանուր համերաշխութեամբ մը, աւելի կորովի ու աւելի ազդու կերպով մը պիտի կարենայ խօսիլ կառավարութեան առջև, թէև պէտք է խոստովանիլ, թէ իր ընտրելիք դիրքը հանդէպ կառավարութեան չափազանց փափուկ է։

Ընտրութիւն մը ընել դժուար պիտի ըլլայ, սակայն ինքն անշուշտ պիտի գիտնայ որոշ ուղղութեամբ մը գործել։

Իր ընտրութիւնը յաղթանակ մըն էր մասնաւորապէս անոր համար, որ ծերերը նախապատիւ համարելու աւանդական սովորութեան հարուած կը տրուէր և գործելու ատակ ու առողջ, աշխատութենէ չընկճուող անձ մը կը կոչուէր պատրիարքութեան։

Իր ընտրութիւնը առաջդիմական քայլ մըն է նաև անով, որ նորընտիր պատրիարքը, իբր միաբան Արմաշի դպրեվանքին, կը պատկանի եկեղեցական վերանորոգութեան կուսակից սերունդի մը և աւանդական սովորամոլութիւններէն զերծ միտք մը կը ներկայացնէ, նոր ու երիտասարդ սերունդի եկեղեցական մը ըլլալով։

Իր խառնուածքովը և իր կրթութեամբը առաջդիմական խմոր ունենալով, չենք կարծեր, թէ նախկին սերունդին մոլեռանդութիւնները ունենայ և կը յուսանք, թէ ասով աւելի համերաշխութիւն բերելու յաջողի ազգային հատուածներու մէջ։ Շաբաթ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, 24 օգոստոսի

Վարժարանները այս շաբաթում մեծ մասամբ վերաբացվեցին. ուսուցչական խմբերը գրեթէ անփոփոխ են մնում, թէև եկեղեցիների թաղական խորհուրդները փոխվեցին, նոր ընտրութիւն կատարված լինելով։ Ուրախալի է, որ նորընտիր թաղ. խորհուրդները լաւագոյն համարեցին համերաշխական ուղիի վրա դնել իրանց անդրանիկ գործունէութիւնը. սա անշուշտ խելացի կարգադրութիւն պիտի համարել, որովհետև միակողմանի որոշումներն ու կարգադրութիւններն անցանկալի հետևանքների էին հասցնում։

Երամեան վարժարանը նախորդ կիրակի օր մի հանդիսում նախորդ տարվայ բարոյական և նիւթական համարատուութիւնը ներկայացրեց հասարակութեան ու սկսեց իր 36-րդ շրջանը։ 35 տարի է, ինչ այդ վարժարանը նօրմալ կերպով առաջ է ընթանում ու դաստիարակում է Վասպուրականի մի քանի սերունդները. մեր ժողովուրդը ընդհանրապէս գոհ է նրա գործունէութիւնից ու միշտ առանձին համակրանքով ու քնքշութեամբ է վերաբերվում դէպի վարժարանը. այդ է անշուշտ պատճառը, որ դպրոցը իր բիւջէն 200 ոսկուց հասցրել է [illegible] աշակերտների թոշակներից։ Դպրոցի տարեկան տեղեկագրից յայտնվեց, որ Պետերբուրգի եկեղ. խորհրդի, Ա. Մելիք-Ազարեանի և Հ. Առաքելեանի միջոցով ծանուցված 3000 ռուբլի նպաստով՝ դպրոցի դեֆիցիտը փակվել է ու դպրոցը պարտքի բեռից ազատված՝ մտնում է նոր շրջան։

Վարժապետանոցը բացվել է իր սեփական նոր շէնքում, որի պակաս շինութեան ու կահաւորման գործը լրացրեց Սէթ Դավամաճեան, ծախսելով աւելի քան 300 ոսկի. յիշեալը հանդուցեալ հայ քաղաքագետի միակ որդին է և այս գործով նա ցոյց տուեց, որ ժառանգել է իր հօր բարեմասնութիւնները։ Վարժապետանոցի գլխաւոր ուսուցիչներից պրոֆ. Համբարձում Յարութիւնեան, որ մի քանի ամիսներից ի վեր տառապում էր թոքախտով, վերջապէս զոհ գնաց այդ ախտին։ Սրա մահը մի մեծ հարուած եղաւ Վարժապետանոցին, որ դժուարանում է նրա յաջորդը ճարել ու բաւականանում է առժամանակեայ ուսուցիչներով։ Անցեալ շրջանում ըմբոստութեան պատճառով արձակված աշակերտները մեծ մասամբ վերադարձել են, և յոյս կայ, որ այս տարի Վարժապետանոցը աւելի նօրմալ աշխատանք ունենայ։

Թաղական խորհուրդների ու հոգաբարձութիւնների փոփոխութեան պատճառով ընդհանուր ջանք է երևում դպրոցները աւելի բարձր մակարդակի հասցնելու։ Կենտրօն. վարժարանը իբրև տեսուչ հրաւիրել է նոր համալսարանաւարտ Մինրան Թէրլէմեզեանին, որ այս տարի վերադարձել է Շվեյցարիայից և մի շատ եռանդուն երիտասարդ է. սպասում ենք, որ նա կենտրօնականը կը հասցնի պատշաճ բարձրութեան, որովհետև ծխական վարժարանների ուսանողները հինգ տարվայ դասընթացքից յետոյ՝ անցնում են կենտրօնական՝ չորս տարի էլ շարունակելու ուսումը և ապա անցնելու Վարժապետանոց։ Կենտրօնականը մեր բարձրագոյն ամենակարևոր հաստատութիւնն է և արժանի բոլոր վանեցի ազգայիններն գուրգուրանաց։ Դժբաղդաբար այս վարժարանն էլ կանօնաւոր բիւջէ չէ ունեցել ու միշտ նուէրներով է ծածկել իր դեֆիցիտը։ Անցեալ տարի 50 ոսկուց աւելի պարտքով է փակել իր բիւջէն, իսկ յաջորդ տարվայ համար սպասվում է, որ նոր նպաստներ հասնեն Ամերիկայից, ուր վանեցիներից կազմված Ուսումնասիրաց Միութիւնը գործում է յօգուտ այդ բաղմարդուն կրթարանի, որի շարունակութիւնը՝ առանց այդ օգնութեան պիտի մատնվի անհնարութեան։ Այս պարագան մեր ամերիկաբնակ հայրենակիցների ուշադրութեանն ենք յանձնում։

Վարագի վարժարանն էլ վերաբացվում է սեպտեմբ. 1-ից. ուսուցչական մարմինը կազմվել է արդէն. իսկ տեսուչ Արտակ Դարբինեան, որ արձակուրդից օգտվելով ուղևորվել էր Կ. Պոլիս, ի մօտոյ Կովկասի ճամբով վերադառնալու է։

Մարակ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 9 սեպտեմբերի

Նորից մէջլիսի ընտրութիւններ, նորից սահմանադրականների և ըէակցիայի բաղխումներ Թաւրիզում։

Շահի խնամակալը հասել է արդէն Թէհրան, ուր տենդային աշխատանքներ են կատարվում մէջլիսի վերընտրութեան համար, ուղարկելով նաև գաւառները ընտրական հրահանգներ։ 4—5 օր առաջ ընդհանուր նահանգապետ Շուջա-ուդ-Դովլէն յայտարարութիւններ կպցնել տուեց պատերի վրա, որով կենտրօնական կառավարութեան անունից կոչ էր անում Թաւրիզի հասարակութեանը՝ մէջլիսի անդամների ընտրութիւնը կատարելու համար։ Եւ ահա երևացին սէյիդներ և պատառոտեցին յայտարարութիւնները պատերի վրայից բարձրաձայն կոչելով փողոցներում ու շուկաներում, որ Ատրպատականը մէշրութէի չէ ուզում։ Քաղաքում յուզումը մեծ էր մինչև երէկ։ Շաբաթ, ամսոյս 6-ին, բոլոր բազարները փակ էին և ժողովուրդը խռնված մէջլիսներում՝ բողոքում էր մէշրութէի գոյութեան դէմ։ Նահանգապետն հարկադրվեց զեկուցում տալ Թէհրան՝ ազգարնակութեան տրամադրութեան մասին։ Ցաւառ լուր է պտտվում քաղաքում, որ Թէհրանից շուտեցի զինուորական գործակալներ են ուղարկվելու Թաւրիզ՝ ընտրութեան գործը գլուխ բերելու նրանց հակողութեան ներքոյ. ընական է համամտան դէպքում ենթադրել, որ երկու կուսակցութիւնների ընդհարումն անխուսափելի կը լինի Թաւրիզում։ Ըէակցիայի ոյժը մեծ է այստեղ. սահմանադրականների հոսանք չի հանդէս գալիս առայժմ, գուցէ հակառակ կուսակցութեան երկիւղից։ Քաղաքն իր նօրմալ վիճակն ստացաւ այսօր։ Դիւանագիտական մարմինները հետևում են անշուշտ կատարված դէպքերին, աւելի շատ անգլիական հիւպատոսարանն է, որ խորհուրդներ է տալիս ձեռնարկել արագ ընտրութեան գործին՝ անխախտ պահպանելու մտօք Պարսկաստանի անկախութիւնն ու ամբողջութիւնը։

Թաւրիզում ամենաուշագրաւ բանն է բելգիացիների և նահանգական կառավարութեան միջև գոյութիւն ունեցող սառն յարաբերութիւնը։

Ինչպէս արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին, բացի տաքատներից և պօստային վարչութիւնից բելգիացիներին յանձնված է նաև երկրի ֆինանսի գանձերն ու մատակարարելը։ Առաւել պարզելու համար ասում ենք, որ մալիաթ և այլ տուրքեր գանձելուց յետոյ նաև պաշտօն ունեն նրանք ծախսված գումարների վրա հսկել, որ ապարդիւն չը վատնվեն դրամները։ Այս հանգամանքը գուցէ շատ նահանգապետների, սակայն առաւելապէս դժգոհ է թողել Ատրպատականի նահանգապետ Շուջա-ուդ-Դովլէին, որ կաշկանդված է զգում իրան առանց բելգիացիների կօնտրօլի դրամ չը կարենալ ծախսելուն համար։ Վերոյիշեալ պատճառով ու հիմքերով բելգիացիների հանդէպ նահանգապետը զայրացած տրամադրութիւն է ունենում յանախ։

Այս վերջին ամիսներում այդ յարաբերութիւնն աւելի սուր կերպարանք ստացաւ այն պատճառով, որ Թաւրիզում ջերմախտա պետական խորհրդի հիմնարկութիւնը առանց ամուրդի Շուջա-ուդ-Դովլէի ձեռամբ ու գիտութեամբ ծախվեց ռուսահպատակներին. մինչդեռ պետական նման կալուածների վաճառումը, ասում են բելգիացիները, օրէնքի տրամադրութեամբ պիտի կատարվէր աճուրդով և բելգիացիների գիտութեամբ ու ձեռքով։ Սառը բանակցութիւնների հետևանքն այն եղաւ, որ բելգիացի ընդհանուր տեսուչ Բանօզէն հրաժարեցվեց պաշտօնից Թէհրան գնալու համար, որպէսզի նահանգապետի տրամադրութիւնը դէպի բելգիացիները պինդ չը լարվի։

Պետական դալլան բելգիացիներին էր յանձնված, որպէսզի տարբաղդ հացի գործն ևս բելգիացիները վարէին ու բարեկարգէին. սակայն նահանգապետն ուզում է այդ ևս առնել նրանցից. և՝ ընդդէմ բելգիացիների՝ նահանգական իշխանութեան կողմից երևացին յայտարարութիւններ, որ բելգիացիները հին ցորեն են գործածում, նորը ծախում են հայն։

Մեր այսօրվայ թղթակցութիւնից ակնարև է, թէ ինչ բէժիմ կայ Ատրպատականում։ Կախաղանն իր էութեամբ դեռ գոյութիւն ունի. մի շաբաթ առաջ նահանգապետը ձերբակալել տուեց Թէհրանից եկած մի քանի թաւրիզեցիներ, որոնք սահմանադրական են եղել երբեմն և այժմ ոճրագործ նպատակներով եկողների կասկած են ներշնչել. դրանցից մինին բարձրացրին կախաղան։

Այս տարվայ երաշտը ծանր նստեց Ատրպատականի վրա. ջրի դալի սակաւութիւն, մթերքների անհամեմատ սղութիւն։ Հողագործներից մեծ նեղութեամբ է առնվում հաց. ցորենն յանկարծ բարձրացաւ խալարն 30 թումանի. դա շատ ծանր է Պարսկաստանի նման խիստ չքաւոր հասարակութեան համար։

Հայկազուն

ԽՈՀԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏԻԱՅԻ 50-ԱՄԵԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Նուէր Ուգուստ Բէբէլի յիշատակին)

I

Կարծես քանակի թաւանական մինուսը և ոյժի հասարակական բեգրեսը գոյութիւն չունեն ամենևին մի կուսակցութեան կեանքում, որ սպառնական ծաւալով յարաճում ու ծովանում է Տեվտօնեան տոհմի ամենամեծ ու հպարտ ներկայացուցչի հայրենիքում։ Ծնունդ առնելով 60-ական թուականների տարամերժ մթնոլորտում, վերացնելով յետագայ պատերազմալից տարիների ծանր կրիվիսը, ենթարկվելով դրագծական հալածանքի՝ երկաթէ կանցլերի անասնական իշխանութեան կոված բացառիկ օրէնքների ճնշման ներքոյ, մաշեց գերմանական ընկերա-ռամկավար կուսակցութիւնը իր ողջ մարդահասակը դառնալից փորձառութիւնների երկաթէ բովում։ Եւ այսօր իր 50 տարեկան (կուսակցութիւնը հիմնվել է 1863 թ.) առնական հասակի կենսալիր շրջանում իրաւունք ունի Ուգուստ Բէբէլի կուսակցութիւնը դիալեկտիկական բանաձևով արձանագրել իր վայելուն պատմութեան գաղտնիքը. «Իմ խոշոր զանգուածային կազմի անտման մեծութեամբ և ունեցածս արտաքոյ կարգի յաղթական նուաճումներով՝ պարտական եմ ես իմ կրած արտաքոյ կարգի հալածանքներին ու ճնշումներին՝ յիսնամեայ պատմութեան ընթացքում։»

Որպէսզի ասածս տրամաբանական անհերքելիութիւն կամ պարզաբան չը թւայ այն ընթերցողներին, որոնք սոսկ են՝ «միայն պարզա հողում կարող է աճել և ուռճանալ ցանած սերմը»՝ շարլօնական ճշմարտութեան, այսինքն միայն նպաստաւոր պայմաններին ծոցում կարող է որևէ գործունէութիւն նպաստաւոր հետևանքներ ունենալ—ուղղակի նախադրութիւններից ուղղակի եզրակացութիւններ--հարկ եմ զգում տալ այստեղ մի քանի լրացուցիչ բացատրութիւններ այն կուսակցութեան զարգացման առանձնայատուկ պայմանների մասին, որ այսօր բոլորելով իր յիսնամեայ գոյութիւնը՝ դարձել է քանակական միջազգային դեմօկրատիայի աւանգարդը՝ նրա թէօրետիկ ուսուցիչը և կազմակերպական կլսաիկ օրինակը։

Բանւորական շարժումը իր տարերային, անկազմակերպ և էկսանարխիական (չը խառնել անարխիստական գաղափարի հետ) ընաւորութեամբ և ուտօպիստ առաջնորդներով համարեա չէ ճանաչում Գերմանիան, եթէ ի նկատի չունենանք 40-ական թուականները՝ որ քարոզ ասողներ էպիզոտները, համեմատելով նրան Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Այն ժամանակ, երբ Անգլիան ու Ֆրանսիան իրանց անդրծովեան հարստութիւններով (գաղափարային քաղաքականութեամբ) և առևտրական կուտակված կապիտալով ինտուստրիական կապիտալիզմի հոյակապ շէնքի սկզբնական սիներն էին կառուցանում՝ կիրառելով տեխնիկական գիւտերն ու բացումները իրանց գարգալիսային յեղաշրջումներով արդիւնաբերութեան բազմապիսի սահմաններում, Գերմանիան ներկայացնում էր մի վերին աստիճանի ողբալի վիճակ։ Այն ժամանակ չը կար Գերմանիա՝ իբր միասնական պետական հասկացողութեամբ, այլ գերմանական մանրիկ տերրիտորիական միաւորների մի անկազմ ու անկապ հաւաքածու՝ իրանց ֆէօդալական պետերով։ Տնտեսապէս կատարելապէս յետամնաց՝ զուտ ագրիկուլտուրային և ձեռնարհեստային մի երկիր էր գա, զուրկ գաղութային քաղաքականութիւնից և ծովային ոյժից. քաղաքականապէս ցիր ու ցան, պատերազմներով ուժասպառ, աւստրիական հեգեմոնիային, իսկ յետոյ պրուսական մրցակցութեան ենթակայ խաղալիք։

Նորագոյն տեխնիկան և նրա հիմքերի վրա կառուցված կապիտալիստական արդիւնաբերութեան և տնտեսութեան սիստեմը՝ կապիտալիստական ուղղութեամբ բարեշրջման ենթարկեցին հասարակական հին կազմը Անգլիայում և Ֆրանսիայում աւելի քան մի ամբողջ դար առաջ Գերմանիայից։ Այն ժամանակ, երբ այդ արդիւնաբերութեան պրօցէսում դէմ յանդիման կանգնած ծայրագոյն բևեռները՝ կապիտալիստ և բանւոր դասակարգերը՝ կազմում էին նրեթական կուլտուրայի անվիճելի կոթողները Արևմտեան Եւրոպայի երկու առաջնակարգ երկիրներում, Գերմանիան ընդհակառակը ներկայացնում էր տակաւին ագրարային ճորտատիրութեան և քաղաքային համքարութեան (die Zunft) «ոսկէ» ձեռնարհեստի տիպիկական հայրենիքը։ Այն փատը, որ նորդարեան քաղաքական յեղափոխութիւնների խոշոր դարագլխային ակտերը սկսվել են արևմուտքում դեռ 1688 (Անգլիայում) և 1789 (Ֆրանսիայում) թուականներին, ցոյց է տալիս, թէ որքան արագ և աւելի վաղ են հասունացել այդ երկիրներում տնտեսական ոյժերը և սրանցով պայմանաւորված նորագոյն քաղաքային կուլտուրան և քաղաքացիական տարրերը։ Դեռ անցեալ դարի 30-ական թուականներին անգլիական բանւորութեան («չարտիստական շարժում» անունով) հուժկու արտայայտումները՝ հրապարակային ընդհարումների ուղեկցութեամբ, հարկադրում էին կառավարութեան սոցիալական և քաղաքական բէֆորմներով «չորրորդ դասի» պահանջներին ընդառաջելու։ Իսկ ֆրանսիական, յատկապէս Պարիզի բանւորութեան խաղացած քաղաքական դերը 40-ական յիշատակելի թուականներին՝ կազմում է արդէն բանւորական շարժման միջազգային պատմութեան մէջ փայլուն էջերից մէկը։ Գերմանիան, ընդհակառակը, շեշտածս յարաբերութիւնների տեսակէտից ոչինչ, կամ համարեա ոչինչ չէր ներկայացնում իրանից։

Ուրեմն նախ քան գիտական սոցիալիզմի երևան գալը, անգլիական և ֆրանսիական բանւորութիւնը անցել էր դասակարգային—անշուշտ տակաւին անսպատակագիտակից—շարժման ու ասանդութիւնների որոշ դրպրոց, ունէր իր թէօրետիկ ուսուցիչները և պրակտիկ զեկավարները. նա գործօն դերի մէջ հանդէս էր եկել սոցիալական յեղաշրջումների մեծ բեմի վրա և ակնայայտօրէն ապացուցել, թէ հասարակական որպիսի՛ խոշոր ֆակտոր է թագնված լաթենթ վիճակի մէջ կապիտալի այդ ժամանակակից «ատրուկների» վիթխարի բանակի շարքերում։ Նա՝ արևմուտքի պրօլետարիատը՝ աւելի վաղ էր այնտեղ, իբրև պատմական հասունացած պայմանների բնական արդիւնքը, քան նրա դասակարգային գոյութեան ու գործունէութեան բէյալ հիմքերից մշակված գիտական ուսմունքը՝ յանձինս սոցիալիզմի։

Այլ էր գերմանական (և միւս բոլոր տընտեսապէս յետամնաց երկիրների) բանւորութիւնը. սրա ոչ միայն նախասոցիալիստական դերի, այլև նախասոցիալիստական զոյութեան մասին խօսք լինել չէ կարող, որպէս ինդուստրիական խոշոր բանակ։ Գերմանական բանւորութիւնը չունէր անցեալ, չունէր տրադիցիա՝ ոչ գործնական շարժման փայլուն դրուագների և ոչ ուտոպիստների աղանդաւորական ուսմունքի (մանր ու մանանի փորձերը ուշադրութեան չենք առնում այստեղ)։ Նրա շարքերը դեռ կուսական վիճակի մէջ էին, մտքի հորիզոնը՝ դեռ հում ու անաղարտ։ Փոյթ չէ որ գիտական սոցիալիզմի հիմնադիրները՝ Մարքսն ու Էնգէլսը՝ ծնունդով իր հայրենակիցներն են։ Սոցիալիստական կրթութեամբ և գիտական մտածողութեամբ եղել են—և պէտք է լինէին—նրանք ֆրանսիական և մանաւանդ անգլիական հասունացած յարաբերութիւնների արդասիք, որոնց ծոցում միայն հնարաւոր եղաւ նրանց արտաբերել իրանց դարագլխային երկերը։

B. Intimus

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Ինչպէս գիտենք, Թիֆլիսում երկու յօբելեանական մարմին էր կազմված հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ յօբելեանի առիթով։ Այդ մարմիններից մինը, որ կոչվում է «Թիֆլիսի յօբելեանական մասնաժողով» և որ ընտրվել է 1912 թ. հոկտ. 8-ին բօրսայի դահլիճում գումարված մի մեծ ժողովի ձեռքով, գործում էր Հ. Առաքելեանի նախագահութեամբ։ Երկրորդ մարմինը, որ կոչվում է «Թիֆլիսի թեմական յօբելեանական յանձնաժողով», ընտրված էր այս տարվայ ապրիլի 22-ին, առաջնորդարանում կայացած ժողովի ձեռքով և գտնվում էր Մեսրոպ եպիսկոպոսի նախագահութեան ներքոյ։ Առաջինը, այն է «Թիֆլիսի յօբել. մասնաժողովը» բաղկացած է 40 անդամներից. երկրորդը, այն է «թեմական յանձնաժողով» կոչվածները 15 անդամներից։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը առաջարկել էր Մեսրոպ եպիսկոպոսին աշխատել միացնել այդ երկու մարմինները, սակայն Թիֆլիսի թեմական յանձնաժողովի բռնած դիրքի պատճառով՝ միութիւնը տեղի չունեցաւ. և որովհետև վերջինս սկսեց գործել իբրև թեմական յանձնաժողով, «Թիֆլիսի մասնաժողովը» քաշվեց ասպարէզից և ընդմիջեց իր գործունէութիւնը, մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերջնական անօրէնութիւնը։ Կաթողիկոսը օրինաւոր ճանաչեց երկու մարմինների գոյութիւնը և առաջարկեց, որ երկուսն ևս գործեն յօգուտ դպրոցական ֆօնդի։ Սակայն Մեսրոպ եպիսկոպոսի նախագահութեան ներքոյ գտնվող թեմական յօբել. յանձնաժողովը անակնկալ կերպով հրաժարական տուեց վերջին օրերս, որով Հ. Առաքելեանի նախագահութեամբ գործող Թիֆլիսի յօբել. մասնաժողովը կամայ ակամայ ստիպվեց հանդէս գալ, չը թողնելու համար որ համազգային յօբելեանի ծոնանմբութիւնը չը կատարվի Թիֆլիսում։

Այդ նկատումով՝ յիշեալ մասնաժողովի բիւրօն, իր նախագահ Հ. Առաքելեանի հրաւէրով, ամսոյս 13-ին նիստ գումարելով՝ կայացրեց հետեալ որոշումները.

1) Մասնակցել հոկտեմբերի 12 և 13-ին էջմիածնում կայանալի համազգային յօբելեանի ծոնանմբութեան։

2) Ընտրել մասնաժողովի անդամներից մի ենթամասնաժողով՝ հանգանակութիւն կատարելու յօգուտ դպրոցական ֆօնդի։

3) Թիֆլիսում հոկտեմբերի 20-ին կազմակերպել հանդիսաւոր նիստ, նուիրված մեծ ոգնին, որին հրաւիրել մասնակցելու քաղաքիս բոլոր գրական, գիտական և կուլտուրական հաստատութիւնները, առանց ազգի և կրօնի խտրութեան, ի նկատի ունենալով որ յօբելեանը ոչ միայն ազգային,

այլ և կուլտուրական մեծ ոսն է։ Այդ նպատին պէտք է կարդացվին բեֆերատներ և արտասանվին ճառեր հայերէն, ռուսերէն, վրացերէն, թուրքերէն՝ բացատրող մեծ ոսնի պատմութիւնը և քաղաքակրթական նշանակութիւնը։

4) Տպել մի բրոշիւր՝ հայ գրերի գիւտի մասին և տարածել ժողովրդի մէջ, ինչպէս և յօդուածներ լրագիրների մէջ։

5) Ձեռք բերել Տ. Նազարեանից ս. Սահակի և Մեսրոպի մեծադիր պատկերները 1000 հատ և ուղարկել ձրիաբար հայոց եկեղեցական-ծխական դպրոցներին։

6) Կազմակերպել հոկտ. 20-ի երեկոյեան գրական-երաժշտական հանդէս և ապա բանկէտ ի յիշատակ մեծ ոսնին։

7) Հրաւիրել Թիֆլիսի թեմի առաջնորդին՝ մասնակցելու հանդէսներին, իբրև թեմի առաջնորդ։

8) Մասնակցել հոկտ. 12-ին և 13-ին Թիֆլիսում կայանալիք եկեղեցական և դպրոցական հանդէսներին և հոգեհանդիսանքներին։

9) Դումարել հինգշաբթի, սեպտ. 19-ին, յօբելեանական մասնաժողովի նիստը իր լրիւ կազմով և առաջարկել նրա քննութեան և վաւերացման ներկայ ծրագիրը։

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Իր ամենահպատակ զեկուցագրի մէջ Կովկասի փոխարքան մատնանշում է Կովկասում տիրող ռուսերէնի առանձին դրութեան վրա։

Մենք սովորել ենք կարծելու, թէ այլազգի ծայրագիրկիներում ամենից առաջ պէտք է կռիւ մղել պետական լեզուի համար, որոշ ատիճանի կապել այն ազգաբնակութեան շնչին, պահանջել անպայման դասաւանդել։

Սակայն այդ հոգսը Կովկասում գոյութիւն չունի բնաւ։ Ու նրա անհրաժեշտութեան բացակայութիւնը ընդհանուր կերպով պատկերացնում է այն ներքին առանձնայատուկ կապերը, որոնք գոյութիւն ունեն Ռուսաստանի և Կովկասի միջև։

Կովկասը երբէք չը պէտք է համեմատել Լեհաստանի, ևս առաւել Ֆինլանդիայի հետ։ Թէ Ֆինլանդիայում և թէ Լեհաստանում ռուսաց լեզուն օտար, խորթ լեզու է համարված, առանց որի կարող են եօլա գնալ և լեհերը և ֆինները, չը կորցնելով իրանց կապը արտաքին կուլտուրական աշխարհի հետ։ Ու հէնց բարձր, աւելի ունոր ու աւելի կրթված շրջանները առանձնապէս յամառում են ռուսերէն չը խօսելու ցանկութեան մէջ։

Բոլորովին այլ է Կովկասում։ Այդ երկրի կուլտուրան կանգ առաւ միջին դարերում, XII և XIII դարերում, Վրաստանի թագաւորութեան «ոսկէ դարագլխին» նշանաւոր Թամարա թագուհու և Դաւիթ թագաւորի օրով։ Այդ, նոյնիսկ աւելի հին դարաշրջանին են վերաբերում նաև հին թանգարանային արտարարանները։ Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, նա իբրև պետութիւն մեռաւ արդէն XI դարում։

Վրաց թագաւորութիւնը բաժան-բաժան լինելով, սկսում է կովկասեան քրիստոնեաների ատիճանական վայրենանալը ասիական խօլական նուաճողների մշտական արիւնահեղ կռիւի մէջ։ Զարմանալին այն չէ, որ արիւնով ներկվեցին բոլոր հին կուլտուրական յիշատակարանները, զարմանալին այն հերոսութիւնն է, որով փոքրիկ Վրաստանը հասցրեց իր անկախութիւնը մինչև XIX դարի սկիզբը։ զարմանալի է, որ չանայացաւ քրիստոնեաների հաւատը վրացական ու հայկական եկեղեցիներում։

Ռուսաց իշխանութիւնը գեղեցիկ երկիրը դատ ծխացող փլատակների մէջ։ Չէ՞ որ ընդամենը հինգ տարի Վրաստանը միացնելուց առաջ պարսից շահ Ագա-Մահմէդը քարուքանդ արեց Հերակլ արքայի մայրաքաղաք Թիֆլիսը, մահացնելով ու գերելով նրա ազգաբնակութեան կէսին։ Ուստի և Պաւլ կայսրի հրովարտակը նրա նշանաւոր խօսքերով՝ թէ «ոչ շահախնդրութեամբ ենք վերցնում մենք մեր վրա»՝ ոչ թէ նուաճման մի ակտ էր, այլ մահմեդական դարաւոր բռնակալ լծից ազատելու ակտ։

Հէնց այդ պատմական պատճառներով պայմանաւորված են Կովկասի բոլոր ընդհանուր առանձնայատկութիւնները և մասնաւորապէս՝ ռուսաց լեզուի դրութիւնն ու դերը։ Այն կուլտուրան, որ կորցրին ու չը կարողացան այլ ևս իւրացնել ու զարգացնել Կովկասի քրիստոնեայ ժողովուրդները, որ չը գիտէին երբէք կիսավայրենի մահմեդական ցեղերը, երկրի մէջ մտցվեց ռուսական հզօր իշխանութեան ձեռքով, որ միանգամից ապահովեց խաղաղութիւնն ու քաղաքացիական իրաւակարգը։

Եւ ռուսաց լեզուն բնականաբար դարձաւ այնպիսի լեզու, առանց որի անկարելի է հաղորդակից լինել եւրոպական կուլտուրային։ Կովկասում ասօր է ռուսերէն չը գիտենալը, ամենափոքր ինտելիգենտ մարդը արդէն վիրաւորվում է, եթէ նրան կասածեն, թէ նա չը գիտէ ռուսերէն։

Սկիզբներում երկիրը միացնելուց յետոյ ռուսաց լեզուն դառնում է տեղական բարձր հասարակութեան լեզու, լաւ տոնի ու կըրթական լեզու, այսինքն բնականաբար ստեղծվում է մի երևոյթ, որ միանգամայն ներհակ եր այն երևոյթին, որպիսին մենք տեսնում ենք Լեհաստանում և Ֆինլանդիայում։

Չը կայ և չէ կարող լինել Կովկասում ռուսերէն չը գիտցող ինտելիգենտ։ Ռուսաց գրքի վրա է ձևակերպվում նա, նրա էջերից է իւրացնում բոլոր կուլտուրական հասկացողութիւնները։ Եւ հետևանքում ստացվում է այն, որ քաղաքային ինտելիգենտ ազգաբնակութեան համար ռուսերէնը իր լեզուն է, որի հետ նա ծանօթ է հէնց երեխայութիւնից, ու նա պէտք է սովորէ ոչ թէ այն, այլ իր ազգային լեզուն,—վրացերէնը կամ հայերէնը։

Կովկասը վաղուց է խնդրում բարձր կրթական հաստատութիւն — համալսարան կամ պոլիտեխնիկում։ Այդ մասին շարունակ գրում են Կովկասեան բոլոր լրագիրները, և ի հարկէ խօսք անգամ չը կայ տեղական լեզուներով դասաւանդելու մասին. այդպիսի համալսարան ոչ ոքի հարկաւոր չէ. Կովկասում բոլոր դպրոցներից—թէկուզ լինեն գրանք բարձր, միջին կամ տարրական—պահանջվում է ամենից առաջ՝ տալ ըստ հնարաւորութեան լիակատար ռուսերէն. որովհետև ռուսերէնը հասարակութեան կուլտուրական խաւերի լեզուն է։

Բայց այսօրինակ որոշմամբ դեռ չէ ըստ պատվում լիովին ռուս լեզուի դերը Կովկասում։ Նա, բացի դրանից, հանդիսանում է անհրաժեշտ պայման առօրեայ բովանդակ կեանքում՝ ինչպէս միջազգային լեզու։ Ինչպէս դիւանագիտական յարաբերութիւնների համար ֆրանսերէնն է, այնպէս և ռուսերէնը անխուսափելի գործնական լեզուն է կովկասեան ժողովուրդների փոխադարձ շփման համար։ Գրօզնայի չեչէնը, Երևանի հայը և Քութայիսի մինգրելը խօսում են ռուսերէն՝ իրար հասկանալու համար։ Եւ ամեն մէնը, ով կամենում է ընդլայնել իր գործի շրջանառութիւնը, պէտք է իմանայ այդ լեզուն։

Այսպիսի են Կովկասեան երկրի ընդհանուր առանձնայատկութիւնները դէպի պետական լեզուն ունեցած նրա վերաբերմունքի մէջ։

Հարկ չը կայ ստիպել նրան սովորել այն։ Ռուսերէնը բնականաբար դարձել է կեանքի անհրաժեշտ շարագիրը։

(«Нов. Вр.») Վ. Օպօչինին

ԺԱՀՐՈՑ ՎԷՐԲԵՐ

I

Բագուի հայկական հասարակական կեանքը թարախոտ պալարներով ծածկված մի հսկայական մարմին է ներկայացնում իրանից, պալարներ՝ որոնցից հոսող թարախը գարշահոտութիւն է տարածում չորս կողմը և իր բացիներով վարակում մարմնի մնացեալ անոյշ առողջ մասերն էլ։

Ժամանակակից Սոդոմ-Գոմորը ազգաբնակութեան իր բաբելոնեան խառնուրդով դժբաղդաբար միայն վատ, չափազանց վատ օրինակ է ծառայում քաղաքիս հայ ազգաբնակութեան համար և տանում նրան անդառը դէպի անդունդը։

Չէ՞ որ հայը ամեն տեղ և ամեն ժամանակներում միայն վատ օրինակներն է շուտով պատուաստում իր ազգային օրգանիզմին և անուշադրութեան մատնում լաւ ու գեղեցիկ օրինակները։

Վերցրէք Բագուի հայութեան հասարակական կեանքը, և դուք կը տեսնէք, որ այդ կեանքի մէջ համակրելի, լուսաւոր կէտերը չափազանց հնչին տեղ են բռնում և կորչում են վէրքերից հոսող թարախի մէջ։

Վերցրէք ընտանեկան կեանքը և դուք կը սոսկաք այն ժահրոտ պալարներից, որոնցով ծածկված է այդ կեանքը։

Վերցրէք անհատների սեփական, անձնական կեանքը և այնտեղ էլ կը տեսնէք նոյն վէրքերը, անվերջ թարախոտ պալարներ, անչափ ժահրոտ-վէրքեր, որոնց բժշկելու մասին ոչ ոք չի մտածում, որոնց վարակիչ ազդեցութեան առաջն առնելու համար ոչ ոք չի աշխատում։

Եսական, գծուծ հաշիւներով, անձնական բարեկեցիկ վիճակով տարված մարդիկ չեն մտածում, որ ժահրոտ վէրքերով ծածկված հայ հասարակութեան ու ընտանեկան կեանքի օրգանիզմը կամաց-կամաց քայքայվում է և հսկայական քայլերով դիմում դէպի անկում։

Պէտք է այդ անկման առաջն առնել, պէտք է բժշկել այդ վէրքերը, պէտք է մարմնի ազատ մասերը ազատել վարակիչ թարախի ազդեցութիւնից, և այդ գործը պէտք է իրանց ձեռքերի մէջ առնեն հասարակական ցաւերի անուն կոչող, ազգային վէրքերը բժշկելու գործը յանձն առած մարդիկ. այլապէս՝ շատ չի անցնի, և վէրքերով ծածկված մարմինը կը փտի, կը նեխվի ու քայքայման վերջին աստիճանին կը հասնի։

Այդ վէրքերը լոյս աշխարհ հանելը, շրջապատի վրա նրանց ունեցած վարակիչ ազդեցութեան նկարագրութիւնը տալը լրագրութեան պարտականութիւնն է, լրագրութեան, որը կեանքի արտացոլող հայելին պէտք է լինի։

Եւ մենք, իբրև հայ լրագրութեան ասպարէզում գործողներից մէկը, մեր համեստ ոյժերով կաշխատենք օգտակար լինել Բագուի հայ հասարակութեան կեանքի վէրքերը դարմանելու գործում, կաշխատենք լոյս աշխարհ հանել շատ շատերի աչքերից ծածկված այդ թարախոտ պալարները՝ թողնելով նրանց բժշկութեան եղանակն ու միջոցներն առաջարկելու աւելի կարող անձնաւորութիւններին։

Բագու Վաղարշակ Թումանեան

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ ՄԱՀՎԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Անցեալ օգոստոսի 22-ին լրացաւ 60-ական թուականների ռուսաց առաջադէմ մտքի ամենավառ և պայծառ արտայայտիչներից Տուրգենեվի մահվան 30-ամեակը։

«Ամեն անգամ,—ասում է Վ. Միրսկի,—երբ պիտի տօնվի մի որևէ գրողի մահվան տարեդարձի յիշատակը, որ բաժանված է լինում մեզանից «10-ամեակների անդունդով», յուզվում է մի ծանր հարց, թէ արդեօք չէ՞ մեռել այդ գրողը բոլորովին, մնացե՞լ է արդեօք ընթերցողների յիշողութեան մէջ որևէ մի բան, բացի նրա անունից, հարկաւոր է արդեօք նա մեր սերընդին, որի զգացումները, խոհերը, տրամադրութիւնները նա մարմնացնում էր հասկանալի և գեղարուեստական պատկերների մէջ»։

Շատ ռուս նշանաւոր գրողներից մի յայտնի հասակում յոլնում են, դադարում են մաքառելուց կեանքի խոչընդոտների դէմ, համոզվելով որ անկարող են հաղթեցնել իրանց էդէալները իրականութեան հետ, ուստի կամ հեռանում են ասպարէզից դեռ կենդանութեան ժամանակ, կամ միստիկներ, պէսիմիստներ, սկէպտիկներ են դառնում... Բայց հանգուցեալ Տուրգենեվը, ինչպէս և Բէլինսկին, Դոստոևսկին, Շչեդրինը, Պիսարեվը և այլն, որոնց սրտի ոգևորութիւնը, հոգու յաւիտենութիւնն էր որքան հնարաւոր է շուտով ազատված տեսնել ռուս ժողովրդի միտքը խաւարի կապանքներից, մինչև իրանց մահվան րոպէն մնացին թարմ, իրանց վերկարաբ էդէալներին հաւատարիմ, մնացին գրականութեան մէջ առաջադիմական թարմ ոգու, երիտասարդական գաղափարների հաւատարիմ դրօշակակիրներ... Տուրգենեվը իր բեղուն գրչով անընդհատաբար արթնացնում էր ռուսաց հասարակական կարծիքը, արձագանք էր տալիս իր տաղանդաւոր վէպերով հասարակական բոլոր ընթացիկ խնդիրներին, իր թարմացնող, սթափեցուցիչ զօրեղ ձայնը բարձրացնելով ընդհանուր յետադիմութեան հոսանքում... Կա՞ յարդեօք մի ռուս մարդ, որ՝ եթէ կարդալ գիտէ՝ կարդացած չը լինի այն ստեղծագործութիւնները, որոնք այնպէս ամենազօրեղ կերպով նպաստեցին 60-ական թուականների ռուսաց ազգային մտաւոր գործին։

Հասկանալի է ուրեմն, թէ ինչու այդ իդէալիստ գրողի ազդեցութիւնն այնքան մեծ է ռուս ժողովրդի ոչ թէ միայն բարձր ինտելիգենցիայի շրջանների մէջ, այլ նոյն իսկ փոքր ի շատէ ուսեալ դասակարգի խաւերում, ինչպէս մի անգամ ևս շեշտեցին մայրաքաղաքի նշանաւոր թերթերը, Տուրգենեվի մահվան 30-ամեակին նուիրված ջերմ յօդուածների մէջ։

Շուշի Պօղոս Զաքարեան

ՆՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԸ

Շամախու նորաբաց թեմական դպրոցի տեղի մասին եղած վիճաբանութիւնները որքան էլ հին լինեն, այնքան էլ կարևոր են և լուրջ մտածմունքի արժանի։ Թեմականը Բագու տեղափոխելու կողմնակիցներ աւելի շատ կան։ Շամախում մնալու կողմնակիցները գանվում են Շամախում և մօտիկ գիւղերում. նրանց ասածով՝ Բագուն անկարող է թեմական հոգևոր դպրոց պահել, աշակերտներ չեն լինելու. միջնակարգ ուրիշ դպրոցները այնտեղ շատ են, և յայտնի է, որ հայոց ծխական դպրոցները այնտեղ շատ սակաւ աշակերտներ ունեն։ Շամախին և նրա մօտակայ մեծ հայաբնակ գիւղերը իրանց երկդասեան ծխական դպրոցներով՝ Սաղիան, Մադրասա, Մէյսարի և այլն, թող 16, որանք բաւական են միայն թեմականին աշակերտներ մատակարարելու համար։ Ցիշեցնում են նաև այն, որ Շամախին ունի որոշ ապագայ՝ ծրագրվող երկաթուղին, որ երկուսերեք տարվայ գործ է և որ մեծապէս բարձրացնելու է Շամախու նշանակութիւնը և նրան մօտեցնելու քաղաքակիրթ այլ կենտրոններին։

Թէ որը կընտրվի, այդ կասէ մեզ էջմիածինը։

Շամախի Վ. Թաղուսի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Մեռելոցի տօնի պատճառով, «Մշակի» հեռանալ համարը լոյս կը տեսնի չորեքշաբթի՝ սեպտեմբերի 18-ին։

✦ Երէկ Թիֆլիսը ևս, ամբողջ Ռուսաստանի հետ միասին, շքեղ կերպով տօնեց Միլանի հրովարտակի հրատարակութեան 1600-ամեակը։ Թիֆլիսում առ. ժ. 11½-ին տեղի ունեցաւ եկեղեցական թափօր Սիօնի մայր տաճարից Արմեանսկի բաղարով, Երևանեան հրապարակով դէպի Ալէքսանդրօ-Նէվսկիի անուան զինուորական տաճարը և մի ուրիշ թափօր էլ Կուկիայի եկեղեցուց դէպի զինուորական տաճարը։ Պատարագը վերջանալուց յետոյ, որ մատուցեց Երևանի Պիմէն արքեպիսկոպոսը, միացեալ եկեղեցական թափօրը Պիմէն սրբազանի առաջնորդութեամբ դուրս եկաւ տաճարի բակը, ուր կատարվեց հանդիսաւոր մաղթանք։ Երէկ կառավարական և կրթական հաստատութիւններում պարապմունքներ չը կային։

✦ Վաղը, Թիֆլիսի քաղ. դումայի հերթական նիստում, ի թիւս այլ խնդիրների օրակարգում կան քաղաքագլխի յայտարարութիւնը Վրաստանի էկզարխի մահվան մասին, Լ. Ն. Տօլստոյի անունով թոշակառուներ հաստատելու նախագիծը, վարչութեան որոշումը «Рус. Вѣд.» լրագրի գործունէութեան 50-ամեակը լրանալու առիթով և այլն։

✦ Հոկտեմբերի 10-ին Թիֆլիսի դատաստանական պալատում նշանակված է Օզուրգէթի պօստային գրասենեակից 100,000 ր. յափշտակելու գործի քննութիւնը։ Մեղադրվում են այդ գրասենեակի նախկին կառավարիչ Ասատիանին և կօնտրօլնի պալատի նախկին ծառայողները։

✦ «Рѣчь»-ի և «День»-ի ասելով, Վրաստանի էկզարխի պաշտօնի համար Պետերբուրգում տրվում են Վարշաւայի, Ֆինլանդիայի և Պոլօցկի արքեպիսկոպոսներ Նիկոլայի, Սերգիի և Վլադիմիրի անունները։

✦ Կարմիր Խաչի ռուսական ընկերութեան գլխաւոր վարչութիւնը թոյլատրեց քանալ Թիֆլիսի զինուորական հիւանդանոցին կից դասընթացքներ՝ սանիտարներ պատրաստելու համար։ Դասընթացքները չորս շաբաթով են և բացվում են սեպտ. 17-ից։ Դասընթացքներում սովորելու են նաև 78 զինուոր։

✦ Թիֆլիս քաղաքի 1914 թ. եկամտի նախահաշիւը պատրաստ է։ Բիւջէտային մասնաժողովի առաջին նիստը նշանակված է սեպտեմբերի 17-ին։

✦ Ֆունիկուլէրի վագոնների երթևեկութիւնը մինչև հոկտ. 1-ը կը շարունակվի մինչև երեկոյեան ժամը 11-ը։

✦ Գերմանական մի ֆիրմա բանակցում է վրաց սինօդական գրասենեակի հետ՝ վրաց սեմինարիայի հին շէնքերը վերցնելու մասին, որից յետոյ ֆիրման մտադիր է պատսաժ շինել։

✦ Մէշչանների վարչութեան մէջ դրամահաւաք Սաֆարովը վատնել է 200—300 ռուբլի. վատնողը յանձնված է դատական իշխանութեան ձեռքը։

✦ Թիֆլիսի էլեքտրաքարշի ձրի տոմսակները իրանց ոյժը պահում են մինչև հոկտեմբերի 1-ը։

✦ Այսօր Դիդուբէում տեղի կունենայ օդագնաց Քէլբուրօվի թռիչքը սեփական աէրոպլանով։

✦ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը մի թոշակաւորի տեղ է հատատել հանգուցեալ Պարոն Գրիգորի անունով։

✦ Կովկ. ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդօլֆը մեկնեց Թիֆլիսից Նուխի, Զաքաթալա, Լագօդեղ այցելելու համար։

✦ Աստրախանից ստացանք հետևեալ հեռագիրը. «Դառնագին ողբում եմ Պարոն Գրիգորի, Ներսիսեան սեմինարիայի սանների իսկական բարեկամի մահը։ Նախկին սան՝ Մկրտումեան քահանայ»։

✦ «Մշակի» երեկվայ համարում յիշված շուշեցի օրիորդի ուսման թոշակի համար ստացանք՝ փակ ծրարով՝ «մի անծանօթից» 15 ռուբլի։ Մեզ անյայտ այդ անձնաւորութիւնը աւելացնում է իր մի քանի տող գրած նամակին հետևեալը. «Ցոյս ունեմ, որ ուրիշ բարերար օժանդակողներ ևս կը գտնվին»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

✦ Այսօր տեղի կունենայ օպերային ներկայացումների սեզօնի բացումը Արքունական թատրոնում։ Բացման առիթով կը ներկայացվի ըստ սովորականի «Жизнь за Царя» օպերան։ Ահա երրորդ տարին է, որ Արքունական թատրոնի օպերային ներկայացումների գործի գլուխ կանգնած է տեղացի երաժշտական գործիչ Իվան Զախ. Պալիեվը և պէտք է խոստովանել, անցեալ երկու սեզօնը Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան կողմից ընդունվեց գոհունակութեամբ, շնորհիւ Պալիեվի դէպի գործը ցոյց տուած ջերմ վերաբերմունքի։ Այս տարի ևս նախագծված են մի քանի երաժշտական նորութիւններ։ Խմբի կազմի մէջ բաւական փոփոխութիւններ են կատարված։

✦ Արտիստական թատրոնում ռուսաց դրամատիկական խմբի կազմը արդէն լրացած է։ Սեզօնը կը բացվի նոր պիէսով սեպտեմբերի 25-ին։ Խմբի բեժխեօրներից մէկն է Թիֆլիսցիներին ծանօթ Տուգանովը։

✦ Մեզ խնդրում են տեղեկացնել, որ դերասան Ամօ-Խարազեանը երիտասարդ սկսնակ դերասաններից կազմակերպել է խումբ, որը պարբերաբար տալու է հանրամատչելի ներկայացումներ վրաց ազնուականների թատրոնում, իսկ ժողովրդական ներկայացումներ Հալաբարի թատրոնում։ Վրաց ազնուականների թատրոնում սեզօնի բացման առիթով ներկայացվելու է նոր թարգմանական մի պիէս «Կարմիր ծաղիկ» անունով։ Խումբը տալու է ներկայացումներ և գաւառներում։

ԳԱՆԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Գանձակ, 10 սեպտեմբերի

Ահա քանի օր է, ինչ դերասան Արէլեանը իր խմբով տեղս է։ Մինչև հիմա տուել է երկու ներկայացում՝ Շեքսպիրի «Օթէլլոն» և Շերվանզադէի «Նամուսը»։

Խումբը ընդհանուր առմամբ վատ չէ կազմված, չը նայած որ բեմին չընտելացած ոյժեր կան։

«Օթէլլոն» անցաւ բաւականին աջող. խօսք լինել չէ կարող Արէլեանի մասին, որ տարաւ Օթէլլոյի դերը վերին աստիճանի աջող։ Եագոն—Ոսկանեան—թոյլ էր առաջին գործողութեան մէջ, իսկ բաւականաչափ աջող՝ միւս գործողութիւններում։ Կասիոն—Ալիխանեան—թոյլ էր։ Դեզդեմոնայի դերը տանում էր տ. Արուսը։ Հազիւ թէ սխալված լինեմ, եթէ ասեմ, որ տիկինը ժամանակի ընթացքում մեր բեմի զարդն է լինելու։ Նա ունի բաւականին նուրբ և անկեղծ խաղ։ Պէտք է աչքի առաջ ունենալ մանաւանդ անկեղծութիւնը, անբռնաբարութիւնը, որով բաւական աչքի հարուստ կերպով օժտված է տիկինը։

«Նամուսում» Բարխուդար—Աբէլեան, Ռուստամ—Անդրանիկ, Այրուն-Ոսկանեան, Սուսան—Արուս, Սուսանբար—Մարի և մնացած դերակատարները բաւականին աջող տարան իրանց դերերը։ Շատ աջող էր Աւետեանը Մարտիրոսի դերում։ Սուսանի դերը թուում էր թէ ընդհանուր առմամբ տիկ. Արուսի դերը չէր. այդ դերում ինչքան որ լիրիզմ կայ, նոյն չափով պակասում է ծայրայեղ նրբութիւնը և որոշ չափով տիրապետում ասիական զգացմունքը։ Բաւականին ընտրող էին իրանց դերերում Վարդերը և տ. Ագնիս։ Մուտքի կողմից դերասանները այնքան էլ գոհ չը պիտի մնան. մասամբ իրանք են մեղաւոր. եկել են շատ վատ սեզօնին, մանաւանդ Գանձակի համար, երբ այս ժամանակները բոլորն էլ զբաղված են այգիներով։ Մի քանի ներկայացումներ էլ կունենանք, ի միջի այլոց և «Հին Աստուածները»։ Յովս. Տէր-Վարդանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 12 սեպտեմբերի

Քութայիսից Ս. Նազարեան «Մշակի» № 201-ում գրած թղթակցութեան մէջ հաղորդում է, որ քաղաքում ընտրել են երէցփոխ Մամաջանեանին և ընտրութեան թերթն ուղարկել են կօնսիստօրիա և իբր թէ փութկոտ կօնսիստօրիան կորցրել է։

Պարոնի հաղորդած լուրը միանգամայն անհիմն է։ Ընտրութեան թերթը կօնսիստօրիայում ստացվել է և չէ կորել։ Բայց որովհետև ընտրութեան թերթին կցված չէր Մամաջանեանի ստորագրութիւնը, որով նա պէտք է ասի իր հաճութիւնը, ուստի և կօնսիստօրիան պահանջել է այդ ստորագրութիւնը։

Աստնդպիր կօնսիստօրիայի՝
Մ. Վարդանդարեան

Էջմիածին, 10 սեպտեմբերի

Պ. Սամսոն Յարութիւնեանը՝ հայ ուսուցիչների «բարեյուսութեան» վերաբերեալ՝ կաթող. կօնդակով Էջմիածնից եղած վերջին կարգադրութեան մասին խօսելով, ի միջի այլոց գրում է. «Կարգադրութիւնը կատարված է Էջմիածնում և միմիայն մի քանի հոգևորականների խորհրդակցութեամբ. ներկայ դէպքում, հակառակ ընդհանված սովորութեան, աւելորդ է գտնված իմանալու հասարակութեան կամ նրա ներկայացուցիչների կարծիքը» («Մշակ» № 197, «Հօրիզոն» № 201)։

Որևէ թիւրիմացութեան տեղիք չը տալու համար՝ կարևոր եմ համարում յայտարարել հետևեալը։ Թէև քառորդ դարից աւելի՝ բոլոր կաթողիկոսների և տեղակալների պաշտօնավարութեան ժամանակ, այս կամ այն չափով, մասն եմ ունեցել և որոշ բարոյական պատասխանատուութիւն ստանձնել Էջմիածնում լուծվող ծանրակշիռ խնդիրներում, սակայն այս վերջին բարեյուսութեան՝ կօնդակին ծանօթացել եմ ես առաջին անգամ «Մշակից», և ոչ մի խորհրդակցութեան մասնակից չեմ եղած։ Զեմ մասնակցել նաև, Մատթէոս կաթողիկոսի մահից յետոյ, Ուսումնական, այսինքն է Ուսումնարանական, Ցանձնաժողովին, ոչ իբրև նախագահ և ոչ իբրև անդամ։

Ուսումն. Ցանձնաժողովի նախկին նախագահ՝ Գալուստ Տէր-Մկրտչեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ «Н. Вр.»-ին հեռագրում են Պէկինից. «Ռուսաց դեսպանը պահանջեց անմիջապէս ստորագրել ռուս-չինական պայմանագիր Մանջուրիայի մասին, յայտնելով որ եթէ նորից ձգձգվի գործը, հարցը կը հանվի հերթից, և Ռուսաստանը իրան կը վերապահէ գործողութեան լիակատար ազատութիւն»։

✦ Պէկինից հեռագրում են, որ Իւանշիկայը իրան դիկտատոր է հռչակել։

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ Էսադ-փաշան հրատարակել է Ալբանիան աւտօնոմ Թիւրքիայի դերիշխանութեան ներքոյ. սակայն Թիւրքիան խուսափում է ալբանական նոր արկածախնդրութիւնից։

✦ Աւստրիական «Ցէյտի» ասելով, իցէ թէ Իտալիան և Աւստրիան միասին միջամտեն ալբանական գործերին եւրոպական մեծ պետութիւնների մանդատով։ Մանաւորապէս Աւստրիան վճռել է թոյլ չը տալ Սերբիային գրաւել Ալբանիան սերբական զօրքերով։

✦ Բէլգրադից հեռագրում են, որ ալբանները վերցրին Դիակօվոն և յարձակվում են Պրիզրէնի վրա։

✦ Զը նայած պաշտօնական հերքումներին, բոլոր նշանները ցոյց են տալիս, որ ալբաններին ռազմամթերքներով օգնում են Իտալիան և Աւստրիան։

✦ Լուրերի համաձայն, Աւստրիան պատրաստվում է նուաճել Ալբանիան իր զօրքերով։

✦ Ջերնօգօրական պահեստի գնդերը դէնքի կանչվեցին։

✦ Պարիզից հեռագրում են, որ

ճշգրիտ տեղեկութիւնների համաձայն՝ դեսպան Իզվոլսկին թողնելու է իր պաշտօնը մինչև նոր տարին։

◆ Պետերբուրգի բօլգարական նոր դեսպան Բարկիս Դիմիտրիեվը իր հետ Պետերբուրգ է տանում Ֆերդինանդ թագաւորի ինքնագիր նամակը յանուն Թագաւոր Կայսրի։

◆ Լուրերի համաձայն, Պետերբուրգում նորից հաստատվել է Բասպուտինը և իր վարդապետութիւնն է քարոզում կանանց և երեխաներին։

◆ Կովկասի փոխարքան, ինչպէս հեռագրում են Պետերբուրգից, առաջարկել է, որ եթէ չը տրվի պետական գանձարանից 35 միլիոն բուբլի Կովկասեան լեռնաշղթայով երկաթուղի կառուցանելու համար, տալ այդ գործը մասնաւոր ձեռնարկողների։

◆ Կովկասի փոխարքան կարգադրեց 25 բուբլի ամսական թոշակ տալ Զէլիմ խանի ընտանիքին, որ ներկայումս գտնվում է ցաւալի վիճակում։

◆ Պետերբուրգում «Գրամմոֆոն» ընկերութեան պահեստից գողացված են Շալեապինի և Սոբինովի երգած պլատինկանները 30,000 բուբլի արժողութեամբ։

◆ Կ. Պոլսից տեղեկացնում են, որ թիւրքաց զորքերի մէջ խոլերան մեծ թիւով զոհեր է տանում։ սակայն այդ մասին Բ. Դուռը դիտմամբ լռութիւն է պահում։

◆ Թէհրանում ազգաբնակութեան հակառակութիւնը մէջլիսի ընտրութիւնների դէմ հասել է ծայրայեղ չափերի։

◆ Բումինական պրինցուհի Ելիսավէտան նշանադրվում է յունաց գահաժառանգի հետ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

13 սեպտեմբերի

ԲՈՒԽԱՐԵՍՏ։ Հռոմի դեսպան Միխայլին նոյն պաշտօնով տեղափոխվում է Պետերբուրգ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պավլովսկ է ժամանել հելլէնների թագուհին։

Միլանի հրովարտակի 1600-ամեակի նախօրեակին մայրաքաղաքում սկսվեցին եկեղեցական հանդէսներ։

Թիւրքեստանի գենեռալ-նահանգապետը տեղեկացնում է, որ Տուրգէնում մինչև սեպտ. 9-ը երեսուն հանվեց ժամանակի 28 դէպք, որոնք բոլորն էլ վերջացել են մահով։ Հիւանդանում են բացառապէս կիրգիզները։

«Торгово-Промышл. Газета»-ի հաշուով, հայի բերքը ընդհանրապէս վատացել է գլխաւորապէս հարաւ-արևմուտքում, մասամբ կենտրոնում և հարաւում անձրևների պատճառով, արևելքում—երաշտի ու շոգերի պատճառով։ Աշնանացանի և հաճարի հունձը լաւին է մօտենում, գարնանացանը և գարին—միջինից բարձր են։

ԻՕԱՆՆԻՍՏԱՆ։ Պօրուչիկ Շուլցը ընկաւ 50 մետր բարձրութիւնից և մահացաւ։

ԿԻԵՎ։ Եկաւ ճան. հաղորդակցութեան մինիստրը։

Քաղաքների ներկայացուցիչների համագումարը անհրաժեշտ գտաւ ընդլայնված տեսնել քաղաքների ներկայումս չափազանց սահմանափակված բիւջէտային ու վարկային իրաւունքները, ցանկալի համարեց մերձակայ համագումարի քննութեանն առաջարկել քաղաքային վարկի կենտրոնական բանկ հիմնելու խնդիրը և այլն։

ԿՎԵՐԼԿ։ Մի տան հրդեհի ժամանակ այրվեցին 8 երեխայ։ Նրանց ծնողները և ուրիշ երկու հոգի ծանր այրուածքներ ստացան։

ՊՕԼՏԱՎԱ։ Ներկայումս նահանգական զեմստվոյի հիւանդանոցում պառկած են խօլերայով հիւանդ 5 մարդ։

ԿԻԵՎ։ Աւստրիահայատակ Սելէցկին յօգուտ Գերմանիայի լրտեսելուն համար դատապարտվեց չորս տարով տաժանակիր աշխատանքների։

ԵՐՊԱՏՕՐԻԱ։ Ծովային փոթորկի ժամանակ քանդվեցին ռուսական նաւատնտեսութեան ընկերութեան նաւահանգիստն ու լաստարանը։ Շատ առագաստաւոր նաւակներ շրջվեցին ափ, մի քանիսը չրատոյզ եղան։ Կան մարդկային զոհեր։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչ՝ Ալ. ՔԱԼԱՆԹԱՐ

ՅՈՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ով ուզում է ՇԱՀԱՆ-ՍԻՄՕՆԻ կազմած ձեռք բերել գրքոյկները՝
Մ. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
Գինը 15 և 20 կ.
ՈՒՂԵՑՈՅՑ ՏԱՐՐ. ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 40 կ.
ՁԵՌՆԱՐԿ ԵՒՐՕՊ. ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 50 կ.
Պէտք է դիմել Թիֆլիսի «ԳԻՐ» և «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութները։ Գումարով առնողներին 20% զեղչ է լինում։
(Կ.Չ.) 782. 3—1

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ „ОДОБРИНЪ“
Только МИХАИЛА ЛЕБЕДЕВА
Съ надписью „Этикетъ утвержденъ правит.“.
Это средство уничтожаетъ совершенно въ нѣсколько дней застарѣлыя мозоли и бородавки съ корнемъ.
Главный складъ: Кавказское Т-во Торговли Аптекар. Товарами—Тифлисъ, Баку, Батумъ
(Կ.) 177. 0—26

ԿԱՐ ՈՒ ՉԵՒԻ ԴՊՐՈՑ
Մ. Մ. Կարա-Մուրզայի
Աշակերտուհիների ընդունելութիւնը շարունակվում է։ դասաւանդութիւնը Վօրաի սիստեմով է կատարվում և ծիս. զարդոցների ծրագրով։ Ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ կանանց զգեստների և մօդեի հագուստների հանրամատչելի գներով։ Ուսուցչուհիներին մաս առ մաս վճարումն։ Դպրոցին կից կան ՁԵՌԱԳՈՐԾԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐ, ինչպէս և յատուկ մանկական հագուստների բաժին։
Հասցէն՝ Սօլօլակկայա փ. № 11, տ.Չիշխ. Թումանեանի։
(ու.) 786. 2—1

Լոյս տեսան նոր տպագրութեամբ
ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆԻ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ
Ա., Բ., Գ. և Դ. տարվայ դասագրքերը։
Հաւանութիւն գտած են Կովկասի ուսումն. շրջ. հոգաբարձ. խորհրդի կողմից և ընդունված բազմաթիւ դպրոցներում՝ իբրև օգտակար և հեշտ ուսանելի դասագիրք։
Գումարով գնողներին զեղչ։
Գլխաւոր պահեստը Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում։
Կազմողի հասցէն՝ Александрополь. Ов Ал. Арабаджіану.
(օ. մ.) 704. 10—8

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ
ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
Երգչական ձայնագրութեամբ, ուսուցիչների և աշակերտների համար, գինը 25 կոպ., գումարով գնողներին զեղչ։ գիտել Թիֆլիսի գրավաճառներին և հեղինակին՝ Эчміадзинъ, Духовная Академія. Преподавателю музыки и пѣнія Аршаку Манасовичу Теръ-Осепянцъ.
(չ. ու. կ.) 756. 4—4

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետեւեալ հրատարակութիւնները.
I
ԶԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻՎՊԱՀՈՒԹԵԱՆ
երկաթ., կօլոնիալ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 բուբ.։
II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.
III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.
IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.
Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская, 22 և գրավաճառանոցներում։
(Ե.Հ.Կ.) 680. 20—10

ЛАМПЫ ВЕСТИНГАУЗЪ
БОЛЬШОЙ СКЛАДЪ
ЭЛЕКТРИЧЕСКИХЪ МАШИНЪ
и принадлежностей всякаго рода
у Русскаго Электрическаго О-ва
„ДИНАМО“
ЭЛЕКТРО-МАШИНО-СТРОИТЕЛЬНЫЕ ЗАВОДЫ ВЪ МОСКВѢ.
(Бывшіе Русск. Элек. О-ва ВЕСТИНГАУЗЪ).
Отдѣлъ перепродажи:
Москва, Мясницкая, 13.
Тел. Адресъ: «ОМАНИД».
Перепродавцамъ спеціальныя цѣны.
(Ц 10588) 10—6

Հայ ժողովրդական երգեր
Էսմիզեան
ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ
Առաջին սերիա—վեց երգ։
Իւրաքանչիւրը 10 կոպէկ։
Ծախվում է բոլոր հայ գրախանութներում։
(Կ.) 710. 5—3

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ „ՀԻՊՆՕՏԻԶՄ“ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։
Լոյս տեսաւ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՖԵՐԶԵԱՆԻ
«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ» գիրքը։
Այս ձեռնարկով ամեն ոք կարող է սովորել հիպնօտիզմ, նրա պատմութիւնը և օրէնքը։ Հիպնոտիզմի փորձառական շէօլների թէօրիաները և գանազանութիւնները։ Մարդկային մարի երկուրական բնոյթը կամ դիտակցական և ենթադիտակցական մարի գործունկցիաները։ Նիրհեցնման ու ինքնանիրհեցնման օրէնքները։ Իլլիուզիա կամ հալլուցինացիա։ Կատալեպսի։ Ցեռ-հիպնօզական ներշնչումներ։ Հիպնօզական սէանսներ և ինչպէս տալ։ Խորհրդի փոխանցումն կամ տելեպաթի։ Մատուր պոյծատատեսութիւն։ արթուն կամ քնած դրութեան մէջ։ Ինչպէս կառավարել երեխաներին ներշնչումով։
ՄԵՐ ՄՏՔԻՆՐ ՁՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐՊԵՐԸ.—«Նոնեմ»-ը մարդու մէջ կառավարիչ ոյժը։ Անհատականութեան կարևորութիւնը։ Դրական մտաւոր գործունէութիւն։ Ինչպէս գործածել միտքը։ Ենթադիտակցութիւն։ Ցարտուն փափարի ոյժը։ Կենտրոնացման ոյժը։ Կամքի ոյժը։ Ենթադիտակցական հնարաւորութիւնները։ Ներշնչման ոյժը։ Ինչպէս վարժեցնել ենթադիտակցութիւնը։ Ինչպէս գործածել ամբողջ միտքը։ Հաւատի ոյժը։ Ինչպէս կառուցանել մի զօրաւոր կամք։ Ինչպէս ձեռք բերել ոգեորութիւն կեանքում և այլն։
Գրքի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար գիմել նամակով հետեւեալ հասցէով.—Ռուսատանից. Арутюнъ Шекерджянъ, 22 Гановская, Тифлисъ. Արտատանմից. Haroutun Shekergian, 22 Ganovskaya, Tiflis, Caucasus, Russia.
(Կ.) 385. 25—16

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում
ՆՈՐ ՄԵԹՈԴՈՎ ՍՈՎՈՐԵՑՎՈՒՄ ԵՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի մեթոդով։ Պատմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Զատազոյական Դասընթացքներ տրատոհման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24—4.
(օ.մ.) 743. 0—5

ՇԱՐԺԻՉՆԵՐ ԻՍԿԱԿԱՆԸ „ԱԻԱՆՍ“
ՀՕՐԻԶՕՆԱԿԱՆ, ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ և ՆԱՒԱՅԻՆ
(Մեծակոն եւ շարժական)
1912 թի պատէնտային նոր մոդէլը մինչեւ 300 ուժի։
Ուժի մէկ միութեան համար մէկ ժամում ծախսվում է 5/8 ֆ. նաւթ։
Ջրաղացների արք ու կարգ։

Արժանացել է 60 մէդալի եւ ամենաբարձր պարգեւների։
Ռուսիայում գործածութեան մէջ են 4200 «ԱԻԱՆՍ»։
Նաւօսների և էլեկտրական կայարանների ՍԱՐՔ ու ԿԱՐԳ։
ՁԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ։
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ Է. Ա. ԷԴԵՆԲԵՐԳԻ ԲԱԳԻՈՒՄ։
Կ. 522. 0—13

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ԿԱԹՆԱՏՈՒՆ—„ՇՎԷՅՑԱՐԻԱ“—ԿՕՆԴԻՏԷՐՍԿԱՅԱ
ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ ՓՈՂՈՑԻՑ № 6 ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԳԷՕՐԳԻԵՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ № 1, տուն Միրիմանեանի, Քաշվէթի եկեղ. հանդէպ, շքեղապէս վերանորոգված ընակարանը։
Մթերքները թարմ եւ մատչելի գներով։ Ստացվում են բոլոր թերթերը։
Տարգանօք՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
(Կ. Հ.) 779. 6—2

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒՄ
ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ կանանց զգեստների, գլխարկների, զուլպաների, ժերսէների, տրիկօների և այլն.
Նոյն արհեստանոցներին կից բացվում են երեկոյեան կուրսեր ձեւագիտութեան եւ հարթակարի
Պայմանների մասին կարելի է տեղեկանալ Ընկ. գրասենեակում՝ Պասկեվիչա փող. № 13.
(Չ. Կ.) 754. 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով և
ՀԱՇԻՎՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Ընդունելութեան ժամերը.
Առ. ժ. 8-ից մինչև երեկ. ժ. 2-ը դպրոցում—I Тумановская № 13.
Երեկ. ժ. 5-ից մինչև ժ 8-ը կուրսերում—Михайловскій пр. № 53.
ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է ԱՌԵՒՏՐ. ԹՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՑ։ 771. 10—6

ՀԱՇԻՎՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԱԻԹԵԱՆՆԵՐԻ
Նիկոլայեվսկայա, 36, Վօրոնցովի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։
613. 50—29

Ս. Պետերբուրգի պետական կօնսերվատօրիայի գեղարուեստական խորհրդի Դրուատման արժանացած
Հայ դպրոցների III և IV բաժանմունքների
ԵՐԳ-ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Առաջարկում ենք մեր նոր լոյս տեսած
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ
Ա. մաս (դիատօնիզմ) ◆ Գինը 35 կոպ.
Դիմել բոլոր հայ գրավաճառներին։ Պահեստը «Գիր» գրախանութում։
ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ, ԱՂԱՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
(Հ.ու.կ.) 773. 6—3

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լէնդէնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նեւթերն առնվում են ըստ կեանքից։ Առարկաները են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկեան, բանկային և զարձարանական). 2) Առեւտրական թուաբանութիւն. 3) Քաղաքագիտութիւն. 4) Օրէնդիրութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համբիչի վրա. 7) Գայիչագրութիւն, տրաղարդութիւն (ամենամամ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Osnr լեզուներ. 2) Տպագրութիւն. 3) Գեկոլոգրաֆիա (բեմնգրաֆ և ուր. և 4) Առեւտ. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գատ-գատ։ Ունկնդիրների թիւի չափաւորութեան պատճառով բացվում է երկրորդ զբաղմունքաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաբարբարոսների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմ բերի 15-ին։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնական նոներ և առեւտ. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 54 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 556. 0—32

ԲՈԼՈՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ
ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ
Գազի և էլեկտրականութեան փոխարէն ներքին և արտաքին լուսաւորութեան համար տալիս է «ԿՈՒՆԻՕՐ» լամպերը սկսած 750 մինչև 1200 մոմ։ Շահագործելու տեսակէտից ամենաշահաւէտն է։
Բոլորին մատչելի է իր գնով։
Ր. ՐՕՄԷՐՕՎՍԿԻ, Վիլնա, R. Ромеровскій, Вильна.
Ցարրիկան և գրասենեակը՝ Կիեվսկայա փող., տնտ. տ. № 40. Фабрика и контора Кіевская улица соб. домъ № 40.
Պահանջվում են ամենուրեք վստահելի գործակալներ։
(Կ.) (В. 44565.) 4—5

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՆ ԳՏՆՎՈՂ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՇԻՎՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԵՒՐԱՀԱՄԵԱՆԻ
(Դոյուբիւն ուճի 1895 թ.)
Հեղինակ առեւտրական հաշուապահութեան ձեռնարկի հայոց եւ ռուսաց լեզուով և գան. հարուստ հրատար.։
Ցայս է երկու տեսակ անձանց մասնագիտական առեւտրական գիտութիւն 4-ամեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։
Դասընթացքներում անցնում են.—Առեւտրական և արդիւնաբերութեան գանազան ճիւղերի հաշուապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, գանազան մեթոդներով, կատարեալ իրացումն կրկնակի իտալական սիստեմով և առեւտ. թուաբանութիւն, առեւտ. նամակագրութիւն, մուրհակային և առեւտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վառ ձեռագրի ուղղումն։
Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենոգրաֆիա (աղագրութիւն) և 3) Բեմինգոնի վրա գրել։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Գիայագրերը տրվում են մինիմալութեան թոյլատրութեամբ։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1913 թ.։ Ընդունելութիւնները ամեն օր, բացառեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ առաց լեզուի և թուաբանութեան համար։
Կուրսերը առաջարկում են ցանկացողներին ունենալ իրանց առեւտ. գործերի համար գործնակ. և տեսականապէս պատրաստված հաշուապահներ, օգնակ., գնոտ. և այլ առեւտ. ծառայողներ գիմել կուրսերի հիմնադրին։
Կուրսերի ընթացաւարտները թիւը անցնում է 2000 հոգուց։
Անձամբ և նամակներով գիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.
(Կ. Հ. Ե.) 576. 0—23

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный